




ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՀԲՄ-Ի ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ

25.03.2016



Երևանում բնակարանների գները 9 տոկոսով նվազել են: Այս մասին մարտի 25-ին հայտնել է «Օլիվեր գրուպ» անշարժ գույքի գնահատման ընկերության գլխավոր տնօրեն Արա Ադուրյանը՝ Հայաստանի բանկերի միության (ՀԲՄ) փոխնախագահ Սեյրան Սարգսյանի հետ համատեղ ասուլիսի ժամանակ: Նա տեղեկացրել է, որ 2015 թվականին բնակարանների գների անկում է արձանագրվել մայրաքաղաքի բոլոր վարչական շրջաններում, ընդ որում, ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Ավանում՝ 12%, իսկ ամենացածրը՝ Կենտրոն համայնքում՝ 3.2%:

«Երբ դոլարի փոխարժեքը 2014թ-ի վերջին բարձրացավ 15%-ով, գների իջեցում տեղի չունեցավ, ինչն արդյունքում բերեց անշարժ գույքի թանկացմանը՝ դրամային արտահայտությամբ, որով էլ տեղի են ունենում առք և վաճառքի գործարքները: Բայց 2015 թվականին, երբ դոլարի փոխարժեքը կայուն էր, ոչ ոք պատրաստ չէր նման բարձր շուկայական գնագոյացմանը, հետևաբար կրճատվեց նաև պահանջարկը», - մեկնաբանել է Ա. Ադուրյանը:

Իր հերթին Ս. Սարգսյանն ընդգծեց, որ չնայած անշարժ գույքի լիկվիդայնությունը չի ավելացել անցյալ տարվա ընթացքում, այն շարունակում է բանկային վարկավորման գործընթացներում զբաղեցնել գրավային ապահովման զգալի մասը:

2013 թվականի հոկտեմբերին ՀԲՄ-ի և «Օլիվեր Գրուպ» ընկերության միջև ստորագրվեց անշարժ գույքի շուկայում տիրող իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման հուշագիր, որի շրջանակներում

ընկերությունը պարբերաբար ՀԲՄ-ին է տրամադրում իր հետազոտությունների արդյունքները:

ԶԼՄ-ների ներկայացուցիչները բազմաթիվ հարցեր ուղղեցին ՀԲՄ-ի նախագահ Սամվել Ճզմաչյանին՝ արժույթային փոխարժեքների, բանկերի խոշորացման և այլ հարցերի վերաբերյալ:



2015 Թ-ԻՆ «ՍՓՑՈՒՌ»-ՈՎ ԱՄԵՆԱՇԱՏ ՀԱՐՑՎԱԾ 10 ԲԱՆԿԵՐԸ

18.01.2016



2015թ. «Սփյուռ»-ի հեռախոսային տեղեկատույով 10 առավել շատ հարցված բանկերի առաջին եռյակում են Արդշինբանկը (9 041 հարցում), Յունիբանկը (7 881 հարցում) և ՎՏԲ-Հայաստան Բանկը (7 045 հարցում):

Ինեկոբանկը 6 575 հարցմամբ զբաղեցնում է 4-րդ, Կոնվերս Բանկը՝ 6 326 հարցմամբ՝ 5-րդ տեղը: 6-9-րդ հորիզոնականներում են Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը (6 137 հարցում), Հայէկոնոմբանկը (4 247 հարցում), Արարատբանկը (4 186 հարցում), Հայբիզնեսբանկը (4 081 հարցում): Տասնյակը եզրափակում է Անելիք Բանկը՝ 3 748 հարցմամբ:

Ուշագրավ է, որ եթե 2015թ. առաջին տեղում հայտնված բանկի վերաբերյալ հարցումների թիվը կազմել է 27 318, ապա այս տարի, ինչպես արդեն նշվել է, համապատասխան ցուցանիշը 9 041 է:



ԱՄԵՐԻԱԲԱՆԿԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻՑ \$90 ՄԼՆ Է ՆԵՐԳՐԱՎԵԼ
21.01.2016

Ամերիաբանկը Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիայից (IFC) ստացել է \$50 մլն ստորադաս փոխառություն, իսկ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից (ՎՋԵԲ)՝ \$40 մլն ներդրում:

IFC-ի տրամադրած միջոցներն ուղղվելու են Ամերիաբանկի կապիտալի ավելացմանը, երկրի տնտեսվարող սուբյեկտների վարկավորման հնարավորությունների և ֆինանսավորման հասանելիության ընդլայնմանը, տնտեսական աճի խթանմանը և աշխատատեղերի ստեղծմանը:



«Հաշվի առնելով Ամերիաբանկի կորպորատիվ կառավարման համակարգի բարձր որակն ու աճի արագընթաց տեմպերը՝ մեր տրամադրած ստորադաս փոխառությունը կնպաստի բանկի զարգացմանը և թույլ կտա նախապատրաստվել նախնական հրապարակային առաջարկին (IPO)», - նշել են IFC-ում:

Ինչ վերաբերում է ՎՋԵԲ-ի ներդրմանը, ապա այն ուղղվելու է Ամերիաբանկի բաժնետոմսերի մի մասի ձեռքբերմանը: Առաջին փուլում ՎՋԵԲ-ը ձեռք կբերի Ամերիաբանկի բաժնետոմսերի մոտ 20%-ը՝ \$30 մլն-ով: Մնացած \$10 մլն-ը կօգտագործվի կապիտալի հետագա ավելացման համար: Ներդրումների նպատակն է ամրապնդել Ամերիաբանկը և պատրաստել այն նախնական հրապարակային առաջարկին (IPO):



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԸ 2015 Թ-ԻՆ 10%-ՈՎ ԱՎԵԼԱՑՐԵԼ ԵՆ ՊԵՏՔՅՈՒՋԵ
ՓՈԽԱՆՑՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ**

27.01.2016

10 %

Հայաստանի 1000 խոշոր հարկատուների ցանկում 2015թ-ին ներառվել են երկրում գործող բոլոր առևտրային բանկերը (21 բանկ), որոնք պետքույժե են վճարել մոտ 41,2 մլրդ դրամ՝ 2014թ-ին վճարված 37,5 մլրդ դրամի համեմատ, նշվում է հարկային

ծառայության կայքում:

Բանկերի շրջանում առաջատարների հնգյակում են ներառվել Ամերիաբանկը՝ 5,4 մլրդ դրամ (15-րդ հորիզոնական), ՎՏԲ-Հայաստան Բանկը՝ մոտ 4,45 մլրդ դրամ (24), Արդշինբանկը՝ 4,36 մլրդ դրամ (25), HSBC Բանկ Հայաստանը՝ 3,6 մլրդ դրամ (29) և Հայբիզնեսբանկը՝ մոտ 3,56 մլրդ դրամ (31):

Խոշոր հարկատուների առաջին հարյուրյակում ներառվել են ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԸ՝ մոտ 3,26 մլրդ դրամ (38-րդ հորիզոնական), Ինեկոբանկը՝ մոտ 2,25 մլրդ դրամ (53-րդ հորիզոնական), Յունիբանկը՝ 2,1 մլրդ դրամ (57), Արարատբանկը՝ 1,7 մլրդ դրամ (67), Կոնվերս բանկը՝ 1,68 մլրդ դրամ (70), Հայէկոնոմբանկը՝ 1,59 մլրդ դրամ (75), Անելիք բանկը՝ 1,35 մլրդ դրամ (89), Առեկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբը՝ 1,29 մլրդ դրամ (93):

**GLOBAL FINANCE-Ն ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ ՃԱՆԱՉԵԼ Է «ԱՌԵՎՏՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ» ԲԱՆԿ**

27.01.2016



**GLOBAL
FINANCE**

Global Finance միջազգային ամսագիրն Արարատբանկը ճանաչել է 2015թ. Հայաստանի «Առևտրի լավագույն ֆինանսավորող» բանկը:

«Մրցանակը շնորհիվ է՝ հաշվի առնելով բանկի իրականացրած գործարքների ծավալը, աշխարհագրական ընդգրկման շրջանակը, հաճախորդների սպասարկման բարձր



ARARATBANK

գործարքների ծավալը, աշխարհագրական ընդգրկման շրջանակը, հաճախորդների սպասարկման բարձր

մակարդակը, մրցակցային գնագոյացումը և բանկում ներդրված նորարարական տեխնոլոգիաները»,- ասված է բանկի տարածած հաղորդագրությունում:

Ամենամյա մրցանակաբաշխության հաղթողների ընտրությունն իրականացրել են Global Finance ամսագրի խմբագիրները, տնտեսական վերլուծաբանները, բիզնեսի ղեկավարները և անկախ փորձագետները:



**ՀԲՄ-Ի ՆԱԽԱԳԱՀ ՍԱՄՎԵԼ ՃԶՄԱԶՅԱՆԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈւՂԵՐԶԸ
ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝ ԱՐՄԵՆ ՄԻՔՍԵԼԵՅԱՆԻՆ
09.02.2015**



Ուրախությամբ տեղեկացա, որ ՀՀ Պաշտպանության նախարարությունն ի նշան մեր հայրենիքի պաշտպանության ոլորտի ամրապնդման գործում Ձեր կողմից կատարած աջակցության պարզևատրել է Ձեզ «Վազգեն Սարգսյան» մեդալով: Խորապես համոզված եմ մեր ռազմական գերատեսչության միանգամայն ճիշտ ընտրության համար: Մեկ անգամ չեմ ասել, որ Ձեր նման հմուտ, փայլուն կրթված և բազմակողմանիորեն զարգացած անձը պատիվ կրբեր Հայաստանի ցանկացած ոլորտին՝ և, միանշանակ, բանկային համակարգին:

Հայաստանի բանկերի միության և անձամբ իմ անունից սրտանց շնորհավորում եմ Ձեզ բարձր պարգևի համար և համոզված եմ, որ երկար կյանքի ճանապարհին Ձեզ, անկասկած, դեռ սպասում են բազմաթիվ արժանի նվաճումներ:



ՊՐՈՄԵԹԵՅ ԲԱՆԿԻ 2016Թ. ՕՐԱՑՈՒՅՑԸ՝ ԼԱՎԱԳՈՒՅՆ Է

12.02.2016



Պրոմեթեյ Բանկի 2016թ. օրացույցն լավագույնն է ճանաչվել «Ֆինանսավարկային կազմակերպությունների օրացույց 2016» մրցույթում: Մրցույթը կայացել է ՀՀ Կենտրոնական բանկի այցելուների կենտրոնում:

Բանկում նշել են, որ հաղթողների որոշման ժամանակ հաշվի է առնվել երեք հիմնական չափանիշ՝ հարմարավետություն,

ուսուցողական բնույթ և դիզայն:

«Պրոմեթեյ Բանկի օրացույցի դիզայնի թեման հայերն են և նրանց անգնահատելի հետքը համաշխարհային մշակույթի, գիտության և պատմության մեջ: Ապրելով և արարելով աշխարհի հեռավոր անկյուններում՝ նրանք ստեղծել են արժեքներ և փոխել պատմության ընթացքը», - ասված է հաղորդագրությունում:

Մրցույթը կազմակերպվել էր ՀՀ ԿԲ և Հայաստանի բանկերի և ֆինանսավարկային կազմակերպությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության կողմից:

ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ՓՄՁ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ

23.02.2016



Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը փետրվարի վերջին հերթական անվճար բիզնես դասընթացները անցկացրեց փոքր ու միջին ձեռնարկությունների ղեկավարների համար:

Բանկում նշել են, որ ծրագրի ընթացքում մասնակիցներին ներկայացվեցին հինգ տարբեր թեմաներ, որոնք ուղղված են բիզնեսի օպտիմալ կառավարման համար տեսական և պրակտիկ գիտելիքների տրամադրմանը, ինչպես նաև մարքեթինգային մի շարք գործիքների կիրառմանը: «Դասընթացների ցանկը ապագայում կհամալրվի մեր գործընկերների համար օգտակար այլ թեմաներով», - ասված է հաղորդագրությունում:

Բանկում ընդգծել են, որ այսուհետ անվճար անցկացվող բիզնես դասընթացները կազմակերպվելու են ոչ միայն բանկի հաճախորդ հանդիսացող կազմակերպությունների, այլև դասընթացին մասնակցության ցանկություն ունեցող բոլոր ՓՄՁ ղեկավարների համար:



ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԸ ԹՈՂԱՐԿԵԼ Է VTB-AIR MILES MASTERCARD ՔԱՐՏԸ
01.03.2016



ՎՏԲ-Հայաստանի Բանկը՝ MasterCard միջազգային վճարային համակարգի և Eqvilibria Club ընկերության հետ համատեղ, թողարկել է քոբրենդային VTB-Air Miles MasterCard քարտը՝ զանգվածային սեզմենտի համար:

Բանկում նշել են, որ առաջին անգամ ստեղծվել է քարտ, որի միջոցով կարելի է կուտակել բոնուսային մղոններ՝ գնումների դիմաց:

«Վճարելով VTB-Air Miles MasterCard քարտով Հայաստանում, արտասահմանում, ինչպես նաև համացանցում ցանկացած գնման դիմաց՝ դուք ինքնաբերաբար կուտակում եք բոնուսային մղոններ՝ հետագայում դրանք անվճար ավիատոմսերի և/կամ <http://www.eqvilibriaclub.ru> կայքում հասանելի այլ ծառայությունների (ռեստորաններում սեղանների պատվեր, հյուրանոցների ամրագրում, ավտոմեքենաների վարձակալություն և այլն) հետ փոխանակման հնարավորությամբ: Անկանխիկ եղանակով ծախսած յուրաքանչյուր 500 դրամի/1 դոլարի/1 եվրոյի/60 ռուբլու դիմաց դուք կուտակում եք 2-ից 10 բոնուսային մղոն», - ասված է հաղորդագրությունում:



ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿԸ ՀԱՄԱԼՐՈՒՄ Է ԿԱՊԻՏԱԸ

16.03.2016



ARM SWISS BANK
PRIVATE & INVESTMENT BANKING

ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանած պահանջին, այն է՝ 01.01.2017թ-ից ապահովել բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն մեծությունը 30 մլրդ ՀՀ դրամի չափով, համապատասխանելու նպատակով «Արմավիսբանկ» ՓԲԸ-ն իրականացրել է լուրջ աշխատանքներ և ներկայումս բանկի ընդհանուր նորմատիվային կապիտալը 2016թ. մարտի 22 դրությամբ կազմում է 29 958,3 մլն դրամ:

Հավելենք, որ բանկի բաժնետերերը մտադիր են ընթացիկ տարվա վերջին նորմատիվային ընդհանուր կապիտալը հասցնել 34-35 մլրդ ՀՀ դրամի՝ այդ թվում նաև կանոնադրական կապիտալի համալրման միջոցով:

«Արմավիսբանկ» ՓԲԸ-ն շարունակելու է գործել համաձայն իր ռազմավարությանը՝ մատուցելով կորպորատիվ և ներդրումային բանկային ծառայություններ՝ փրայվիթ բենքինգի տեխնոլոգիաների կիրառմամբ և ձեռնպահ մնալով մանրածախ բանկային պրոդուկտների ոլորտ մուտք գործելուց:



«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԿԳՈՐԾԱՐԿԻ «ՊՐՈՏՈՐԵՅՉ ԼԱԲԱՐԱՏՈՐԻՉ»-Ի PROTOCRM ՀԱՄԱԿԱՐԳԸ

21.03.2016



Մինչև 2016թ.-ի մայիսի վերջը «Յունիբանկը» նախատեսում է ամբողջովին անցում կատարել «Պրոտորեյզ Լաբարատորիզ» ընկերության կողմից մշակված նոր CRM համակարգին: Առաջին անգամ «Պրոտորեյզ Լաբարատորիզ»-ը ներդրեց վարկավորման ավտոմատացված Salesforce CRM-համակարգ Յունիբանկում 2013թ.-ին: Այդ ժամանակվանից ի վեր բանկը մշակել է սպառողական վարկավորման մոտ 611 հազար հայտ, որից 50%-ը հաստատվել է: 2015թ.-ին Յունիբանկի վարկային կոնվեյերը մշակել է ավելի քան 221 հազար հայտ:

ProtoCRM-ը, որը կներդնի «Յունիբանկը», պատկանում է CRM-համակարգերի նոր սերնդին և մշակված է «Պրոտոբեյզ Լաբարատորիզ»-ի կողմից: ProtoCRM ամպային համակարգը հնարավորություն է տալիս լուծելու բազմաթիվ խնդիրներ, որոնք առաջանում են մեծ քանակով հաճախորդներ ունեցող ընկերությունների մոտ, օրինակ՝ հաճախորդային բազայի վարումը մեկ համակարգում, վաճառքների ուղու կառուցում, անվճար և արդիական վերլուծության տրամադրում ցանկացած ժամանակ:

- «Յունիբանկը» Հայաստանում առաջին բանկերից մեկն էր, որ ամբողջությամբ ավտոմատացրեց սպառողական վարկավորման հայտերի ուսումնասիրման գործընթացը: Դա հնարավորություն տվեց մեզ շատ արագ և զգալի ընդլայնել մեր դիրքը սպառողական վարկավորման շուկայում: Անցում կատարելով ProtoCRM համակարգին, մենք լուծում ենք ադմինիստրատիվ և IT ծախսերի խնդիրը՝ պահպանելով համակարգի բարձր որակի աշխատանքը: Մարտի մեկի դրությամբ մեր մանրածախ վարկերի քանակը գերազանցում է 188 հազարը», – նշեց «Յունիբանկի» վարչության նախագահի տեղակալ Մեսրոպ Հակոբյանը:



ԿԲ. ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՎՃԱՐԻ ԶԱՓԸ ԿՈՐՈՇՎԻ ԲԱՆԿԻ ՌԻՍԿԱՅԼՈՒԹՅԱՄԲ
21.03.2016



Բանկերի երաշխիքային վճարներն այսուհետ կախված կլինեն նրանց ռիսկայնության մակարդակից, հաղորդում է ՀՀ Կենտրոնական բանկը:

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքում իրականացվել է լրացում, որը հնարավորություն է տալիս ԿԲ-ին, կախված բանկի ռիսկայնության մակարդակից, սահմանել ավելի բարձր երաշխիքային վճարներ: Այս փուլում որպես բանկի գործունեության ռիսկայնության ցուցանիշ համարվելու է արտարժույթային ավանդների ներգրավման նպատակով բանկի կողմից վարվող բարձր տոկոսադրույքային քաղաքականությունը: Մասնավորապես՝ այն բանկերը, որոնք ներգրավում են առավել բարձր տոկոսադրույքով ավանդներ,

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին պետք է վճարեն համապատասխանաբար ավելի բարձր երաշխիքային վճարներ:

«Տարբերակված երաշխիքային վճարների կիրառումն առավել արդարացի է դարձնում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցների ձևավորման գործընթացը», - ասված է հաղորդագրությունում:

ԿԲ խորհրդի կողմից մարտի 15-ի նիստում «Երաշխիքային վճարները հաշվարկելու և բանկերի կողմից ՀՀ ԿԲ երաշխիքային վճարները հաշվարկելու, ավանդատուների թվի և հատուցման ենթակա գումարի վերաբերյալ հաշվետվության ներկայացման» կարգում կատարված փոփոխությունների արդյունքում ԿԲ-ն ակնկալում է, որ տարբերակված երաշխիքային վճարների համակարգի ներդրումը միջնաժամկետ հատվածում կհանգեցնի շուկայում ձևավորված տոկոսադրույքների միջին մակարդակի նվազեցմանը՝ նպաստելով վարկային ռեսուրսների հասանելիության բարելավմանը: Մյուս կողմից, այս փոփոխությունը կնպաստի ԿԲ որդեգրած ապադոլարայնացման քաղաքականությանը՝ հանգեցնելով ՀՀ դրամով ավանդների գրավչության բարձրացմանը:



ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿԸ ՄԻԱՑԵԼ Է ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ MONEYTUN ՀԱՄԱԿԱՐԳԻՆ

23.03.2016



Անելիք Բանկը միացել է միջազգային դրամական փոխանցումների Moneytun համակարգին, որի միջոցով հնարավոր է փոխանցումներ իրականացնել ԱՄՆ-ի ու Հայաստանի միջև՝ սկսած 7 դոլարից: Moneytun համակարգով մեկ փոխանցման առավելագույն գումարը կարող է կազմել 10 հազ. դոլար: Անելիք Բանկում ընդգծել են, որ իրենք

հայաստանյան բանկերից առաջինն են միացել այս համակարգին:

«Ուրախ եմ տեղեկացնել, որ Անելիք Բանկը ներկայացնում է դրամական փոխանցումների շուկայում նոր և վստահելի իր նոր գործընկերոջը՝ Moneytun

միջազգային դրամական փոխանցումների համակարգին, որի միջոցով փոխանցումը հասցեատիրոջն է հասնում 5-10 րոպեի ընթացքում: Սա դրամական փոխանցումների ոլորտում մեր բանկի կողմից սպասարկվող թվով 8-րդ համակարգն է», - նշել է «Անելիք Բանկ» ՓԲԸ հասարակության հետ կապերի պատասխանատու Աստղիկ Մարտիրոսյանը:

GLOBAL FINANCE-Ն ԱՄԵՐԻԱԲԱՆԿԸ ՃԱՆԱՉԵԼ Է «ՏԱՐՎԱ ԼՎԱԿՈՒՅՆ ԲԱՆԿ»

24.03.2016



Ամերիաբանկը Global Finance ամսագրի կողմից ճանաչվել է Հայաստանի 2016թ. «Տարվա լավագույն բանկ»:

Բանկում նշել են, որ այս մրցանակին Ամերիաբանկն արժանանում է 5-րդ տարին անընդմեջ՝ սկսած 2012-ից:

«Այն տրվել է՝ հաշվի առնելով մի շարք էական ցուցանիշներ, մասնավորապես՝ ակտիվների աճ, շահութաբերության մակարդակ, ռազմավարական նշանակության հարաբերությունների հաստատում, ծառայությունների թարմացվող տեսականի և նորարարական լուծումներ, մրցակցային գնագոյացման ապահովում», - ասված է հաղորդագրությունում:



ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿԸ ՈՒ ՀԱԱԳ-Ը ԿԻՐԱԿԱՆԱՑՆԵՆ ՆԱԽԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

24.03.2016

Արմավիսբանկը և «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալությունը» (ՀԱԱԳ) համատեղ կիրականացնեն ՀՀ ձեռնարկությունների նախաարտահանման ֆինանսավորում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Կողմերի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր, որի նպատակն է գործակալության թողարկած ապահովագրական վկայագրերով ֆինանսավորել ՀՀ արտահանողներին ինչպես նախաարտահանման գործընթացում, այնպես էլ հետաձգված վճարային պայմանով արտահանումների դեպքում:

Ինչպես նշել է ՀԱԱԳ գործադիր տնօրեն Վազգեն Աբգարյանը, նախաարտահանման ֆինանսավորման ապահովագրությունը հնարավորություն կտա Հայաստանում գործող առևտրային բանկերին և վարկային կազմակերպություններին առանց կոշտ գրավի պայմանի իրականացնել արտահանողի վարկավորում՝ շրջանառու միջոցների համալրման նպատակով:

Արմավիսբանկի գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյանը հիշեցրել է, որ բանկը ՀԱԱԳ-ի հետ համագործակցում է շուրջ մեկ տարի, որի ընթացքում ֆինանսավորվել է արտահանման ավելի քան 30 գործարք՝ \$1 մլն-ի չափով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Հայաստանի բանկերի միությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միությունն է: Միությունն իրավաբանական անձ է, որը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացած շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային կազմակերպություն:

Միության հիմնական խնդիրներն են՝

- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և միջազգային կազմակերպություններում,

- նպաստել միջբանկային կապերի զարգացմանը և ամրապնդմանը, համակարգել Միության անդամների գործունեությունը՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար,
- մասնակցել Հայաստանի Հանրապետությունում բանկային և ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և դրանց հասարակական փորձաքննությանը,
- մշակել և իրականացնել ծրագրեր՝ բանկային կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ,
- կազմակերպել սեմինարներ, կոնֆերանսներ և գիտաժողովներ,
- իրականացնել Միության անդամների ընդհանուր շահերից բխող այլ խնդիրներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ +374 10 52 77 31, Էլ. փոստ՝ uba@uba.am: